

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ Օ ՏՈԿՈՍ ԴՐՈՒՅՔԱԶԱՓ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑԻՑ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԻ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՎ ԳԱՆՁՎՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի Օ տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 29-ի ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածի ցանկի՝

1. 3901, 3902, 3903, 3905, 4005, 4805 12 000, 4805 19 100, 4805 19 900, 4805 40 000, 4805 92 910, 6006, 7210 12 110, 7210 49 100, 7606, 8401 ապրանքային դիրքերի տողերը հանել.

2. 8409 ապրանքային դիրքի տողից հետո լրացնել նոր տող հետևյալ խմբագրությամբ.

8410	Հիդրավլիկ տուրբիններ, ջրային անիվներ և դրանց կարգավորիչներ
------	--

3. 8541 ապրանքային դիրքի տողի «հավաքված» բառից հետո լրացնել «բացառությամբ» բառը:

4. 8541 ապրանքային դիրքի տողից հետո լրացնել նոր տող հետևյալ խմբագրությամբ.

8541 40	Կիսահաղորդիչային ֆոտոզգայուն սարքեր՝ ներառյալ ֆոտոգրավանդակական էլեմենտները, հավաքված կամ չհավաքված մոդուլներ, լուսատու դիոդներ
---------	---

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Ամփոփաթերթ

2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող հարկային և հարակից օրենսդրության փոփոխություններ նախատեսող օրենսդրական նախագծերի փաթեթում ներառված՝ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և ՀՀ կառավարության կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Ներկայացված առաջարկության բովանդակությունը	Հիմնավորումներ	Եզրակացություն
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյան</p>	<p>1. Առաջարկվում է նախագծում վերականգնել նախագծի առաջին տարբերակի 1-ին հոդվածի 2-րդ կետը, որով նախատեսվում էր օրենքի 1-ին հոդվածով հաստատված ցանկը ԱՏԳ ԱԱ 84-ից մինչև 8804 00 00-րդ ապրանքային դիրքերի տողերը շարադրել նոր խմբագրությամբ:</p>	<p>ՀՀ կառավարության ներկայիս տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունն է հանդիսանում տնտեսության իրական հատվածի զարգացումը, դիվերսիֆիկացիան, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հաշվին արտադրական կարողությունների վերազինումը և ընդլայնումը, արտադրողականության աճի խրախուսումը, որպես հետևանք մրցունակ արտադրանքի թողարկումը և արտահանման ընդլայնումը: Սակայն ներկայիս վարվող տնտեսական քաղաքականությունը չի նպաստում վերը նշված նպատակի իրականացմանը, քանի որ տնտեսության կարիքների համար մեքենա սարքավորումների հիմնական անվանացանկի ներկրումն անմիջապես սահմանին հարկվում է ԱԱՀ-ով և մաքսատուրքով, ինչը էական խոչընդոտ է հանդիսանում բազմաթիվ ներդրումային ծրագրերի իրականացմանը: Տվյալ հիմնախնդիրը չի լուծվում նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի կիրառմամբ, ինչպես</p>	<p>Վարվող քաղաքականության հիմնական ուղղություններից է գոյություն ունեցող արտոնությունների կրճատումը ինչպես նաև սահմանին չհարկվ ապրանքների ցանկի կրճատումը: Այս առումով ներկայացված առաջարկությունը չի բխում ներկայումս վարվող քաղաքականության հիմնական ուղղություններից: Միաժամանակ առաջարկության ընդունումը կհանգեցնի պետականուտների էական նվազեցման (ըստ հեղինակի առաջարկի՝ 20 մլրդ. դրամ), որը ընդունելի համարվել չի կարող:</p>

		<p>նաև նրա մեջ փոփոխություն կատարող նոր նախագծով, քանի որ հիշյալ հոդվածի մեջ ներառված են խիստ սահմանափակ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքներ, որոնց ներկրումն հնարավոր չէ համարել տնտեսության զարգացման և դիվերսիֆիկացման համար առաջնային:</p> <p>Վերոնշյալ առաջարկության ընդունամբ էականորեն կխախտվի փոքր և միջին բիզնեսի զարգացումը:</p> <p>Առաջարկության ընդունումը կբերի նախնական փուլում մոտավորապես 1 տարվա ընթացքում պետական բյուջեի մուտքերի պակասեցման մոտ 20 մլրդ դրամի չափով, սակայն մուլտիպլիկատիվ էֆեկտը էականորեն կմեծացնի պետական բյուջեի մուտքերը:</p> <p>Վերջին հաշվով սահմանին սարքավորումների ԱԱՀ-ով հարկումն ազատելը չի ենթադրում, որ երկարաժամկետ կտրվածքով ԱԱՀ-ի մասով պետական բյուջեն կորուստներ է ունենալու, այն պարզ պատճառով, որ որոշակի ժամանակահատվածի ընթացքում սարքավորումներով թողարկված արտադրանքի ինքնարժեքի մեջ ներառվում են նաև հիշյալ սարքավորումների ամորտիզացիոն մասհանումները, որոնց վրա կիրառվում է ԱԱՀ:</p>	
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գոհար Ենոքյան</p>	<p>2. Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածից հանել «6006» թիվը:</p> <p>3. Առաջարկվում է «3101 00 000 ապրանքային դիրքի տողից հետո լրացնել նոր տողեր հետևյալ բովանդակությամբ՝ ա) 320416000՝ Ներկ</p>		<p>Վարվող քաղաքականության հիմնական ուղղություններից է գոյություն ունեցող արտոնությունների կրճատումը ինչպես նաև սահմանին չհարկվ ապրանքների ցանկի կրճատումը:</p>

	<p>բ) 320417000` Գունանյութ գ) 370710000` Էմուսիա</p>		<p>Այս առումով ներկայացված առաջարկությունը չի բխում ներկայումս վարվող քաղաքականության հիմնական ուղղություններից: Միաժամանակ առաջարկության ընդունումը կհանգեցնի պետական մուտքերի և արտահանության նվազեցման, ինչը հիմնավորված համարվելու կարող է:</p>	
	<p>4. Առաջարկվում է «3905 ապրանքային դիրքի տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ` 3921` Արհեստական կաշի:</p>			
	<p>5. Առաջարկվում է «4107 ապրանքային դիրքի տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ` 41079910` Բնական կաշի</p>			
	<p>6. Առաջարկվում է «4115 ապրանքային դիրքի տողից հետո լրացնել նոր տողեր հետևյալ բովանդակությամբ` ա) 43021980100` բնական մորթի բ) 43040000` արհեստական մորթի</p>			
	<p>7. Առաջարկվում է «5203 ապրանքային դիրքի տողից հետո լրացնել նոր տողեր հետևյալ բովանդակությամբ` ա) 52091900` Թերմոբյազ, բ) 52095900` Թերմոտրիկոտաժ, գ) 5508` Կարի թել, դ) 56031390` Բայկա, ե) 560490000` Ռեզին, զ) 580421900` Ժանյակ</p>			
	<p>8. Առաջարկվում է «6006 ապրանքային դիրքի տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ` 640612010` կոշիկի տակացու:</p>			
ՀՀ կառավարություն	<p>Առաջարկվում է ԱՏԳ ԱԱ 8401 ծածկագրին դասվող միջուկային ռեակտորները հանել օրենքով հաստատված ցանկի բացառությունների շարքից, ինչի արդյունքում հիշյալ ծածկագրին դասվող ռեակտորները ներմուծելուց մաքսային մարմնի կողմից մաքսատուրք և ԱԱՀ չի գանձվի:</p>	<p>Ներկայացված առաջարկի ներկայացումը բխում է ՀՀ-ում նոր ատոմակայանի կառուցմանը օժանդակելու անհրաժեշտությամբ:</p>		<p>Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>